ւում գտնուող Սերբիայի Հանրապետութեան հայկական ոչ մեծ գաղթօջախի պատմութեան գրաւոր էջերը հանրայնացնելու առումով: Անկասկած, հայերն այստեղ մշտապէս աչքի են ընկել իրենց բարձր դիրքով, արհեստագործական ու առեւտրային հմտութիւններով, մշակութային կապերի (նաեւ՝ գրաւոր մշակոյթի) լայն հնարաւորութիւններով: Պատահական չեն հայ եւ օտարազգի տեղագիրների նկարագրութիւններում անընդմէջ հանդիպող կառուցողական դրուագները, որոնք յաճախ բաւականին խօսուն ու բնութագրական են համայնքի գոյութեան տարբեր փուլերը լուսաբանելու հարցում: Այսօր էլ Սերբիայում եւ, յատկապէս, Բելգրադում ապրում է շուրջ երեք հարիւր հայ: Զկորցնելով հայրենիքի հետ կապը՝ նրանք հնարաւորինս նպաստում են հայ-սերբական դարաւոր յարաբերութիւնների զարգացմանն ու ամրապնդմանը:

---

* Սոյն աշխատանքը կատարուել է Նոր Նախիջեւանի հայոց համայնքի եւ նրա այլ էթնիկ միջավայրի հետ եղած կրօնամշակութային կապերին նուիրուած պատմաազգագրական հետազօտութեան շրջանակում, որը ֆինանսաւորուել է Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդարանի կողմից՝ ՀՀ Գիտպետկոմի միջոցով:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՀԱՆԳՍՏԱՐԱՆԻ ՎԻՄԱԳՐԵՐԸ*

Արծ. Սահակեան, Ա. Մանուչարեան, Հ. Խաթլամաջեան, Ս. Յարութիւնեան

Ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարեանի պարզաբանմամբ՝ «Ռուսական կառավարութիւնը երկրի հարաւի գրեթէ անմարդաբնակ տափաստանները բնակեցնելու, տնտեսապէս իւրացնելու եւ Ղրիմի թաթարական խանութիւնը թուլացնելու նպատակով 1778 թ. կազմակերպեց թերակղզու հայ եւ յոյն բնակչութեան արտագաղթ:

Ղրիմահայերը հաստատուեցին Դոն գետի աջ ափին, հիմնեցին Նոր Նախիջեւան քաղաքը եւ դրա շրջակայքում Զալթը, Թոփտի, Մեծ Սալա, Սուլթան Սալա, Նեսուիտա գիւղերը, իսկ յոյները հիմնեցին Մարիուպոլ քաղաքն՝ իր շրջակայքով:

Եկատերինա II կայսրուհու 1779 թ. նոյեմբերի 14-ի հրովարտակով հայերին մեծ արտոնութիւններ տրուեցին: Նրանք ստացան ընդարձակ հողատարածութիւններ, 10 տարով ազատուեցին հարկերից, նաեւ նրանց վերապահուեց ազատ առեւտրի ու արդիւնագործութեան իրաւունք:

Տնտեսական առանձնաշնորհումներից բացի, հայերը ստացան դաւանանքի ազատութիւն եւ ազգային սովորութիւնների ու աւանդոյթների հիման վրայ, մայրենի լեզուով դատավարութեան ու գործավարութեան իրաւունք, որն իրականացւում էր «Աստրախանի» կամ «Հայոց դատաստանագրքի» հիման վրայ»[1]:

Ինչ վերաբերում է նորաստեղծ ամենամեծ հայկական բնակավայրին, ապա Սարգիս արքեպս. Ջալալեանի իրազեկմամբ՝ «Զհիմն այսր քաղաքի օրհնեաց Յովսէփ ազգասէր կաթուղիկոսն Արղութեանց մեծաւ հանդիսիւ, եւ անուանեաց Նոր Նախիջեւան»[2]: Անուան կապակցութեամբ Վ. Բարխուդարեանը յայտնում է, որ ուսումնասիրողների մի մասը, ելնելով այն հանգամանքից, թէ նոր վայրեր տեղափոխուածներն ամենուրեք աշխատում էին պահպանել նախկին հարազատ գիւղերի, վանքերի, եկեղեցիների անունները, եզրայանգել է՝ հայերը նորահաստատ քաղաքը Նախիջեւան են անուանել Ղրիմի համանուն հայկական բնակավայրի յիշատակին (վերջինս, անշուշտ, անուանակոչուել է ի պատիւ ղրիմահայերի նախնեաց հայրենիք Անի-Շիրակի Նախճաւանի), ոմանք էլ «նախնական իջեւան արտայայտութիւնից են քաղաքի անունը մակաբերում: Առաւել հաւանական է թւում գերիշխող տեսակէտը, ըստ որի՝ ղրիմահայերի նորահաստատ քաղաքը կոչուել է Արարատեան դաշտի հնագոյն քաղաքի՝ Նոյի տապանի աւանդութեան հետ կապուած Նախիջեւանի անունով»[3]:

---

1 Վ. Բարխուդարեան, *Նոր Նախիջեւանի հայկական գաղութի պատմութիւն (1861-1917 թթ.)*, Երեւան, 1985, էջ 5:

2 *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան*, Աշխատասիրութեամբ Տեառն Սարգսի Սանահնեցւոյ Ջալալեանց թեմական Արք Եպիսկոպոսի Հայոց Վրաստանի, Իմէրէթի եւ այլոց, մասն Բ., Տփխիս, 1858, էջ 456-457:

3 Վ. Բարխուդարեան, *Նոր Նախիջեւանի հայկական գաղութի պատմութիւն (1779-1861 թթ.)*, Երեւան, 1967, էջ 73-74:

© National Library of Armenia

Շուտով Նոր Նախիջեւանում հիմնուեց Ս. Խաչ վանքը (1783-1792 թթ.[4]) եւ քաղաքի տարբեր վայրերում կառուցեցին «զվեց եկեղեցիս (Ս. Գրիգոր Լուսաւորիչ՝ 1783-1807 թթ., Խնդրակատար Ս. Աստուածածին՝ 1781 թ., Ս. Գեւորգ 1783-1787 թթ., Ս. Նիկողայոս՝ 1781-1783 թթ., Ս. Համբարձում՝ 1781-1783 թթ., Ս. Թէոդորոս՝ 1783-1786 թթ.[5])»[6]: Ապա Ռուսահայոց թեմի առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը «սահմանեաց յամենայն եօթնեկի անխափան առնել զպատարագ՝ յիւրաքանչիւր եկեղեցիս մէն մի օր, իսկ յաւուր կիրակէի՝ ի բոլոր եկեղեցիս, եւ զօր պատարագի նշանակեաց տօն այնր եկեղեցւոյ, ուր պատարագն մատուցանի»[7]: Վերոյիշեալ սրբարաններից պահպանուել է միայն Ս. Խաչ վանքը, մնացած բոլոր վեց եկեղեցիները քանդուել են խորհրդային անաստուածութեան տարիներին:

Աւելի ուշ, մասնաւորապէս՝ 1875-1881 թթ., կառուցուեց Ս. Կարապետ եկեղեցին, որն օծուեց աւարտման տարեթուի յունիսի 11-ին: Յարդ կանգուն ու գործող այս փոքրիկ աղօթարանը տեղացիները կոչում են նաեւ «Հանգստարանի եկեղեցի»[8], որովհետեւ, ինչպէս բացատրում է Երուանդ Շահազիզը, «շինուած է քաղաքի հիւսիսային կողմը շինութիւններից դուրս գտնուած «Ս. Լուսաւորչի հանգստարանում»: Նախիճեւանի բոլոր եկեղեցիներն էլ ունին իւրեանց առանձին հանգստարաններն, միայն Ս. Լուսաւորիչն է, որ իւր բակում հանգստարան չունի (ի տարբերութիւն միւսների, գտնուել է քաղաքի կենտրոնում[9], որտեղ որպէս կանոն բնակուածութիւնը խիտ է լինում – հեղ.), եւ Ս. Թորոսն (իմա՝ Ս. Թէոդորոսն – հեղ.) ու Համբարձումն, որոնք, բացի իւրեանց բակերում ունեցած հանգստարաններից, ունին եւ մի առանձին հանգստարան դարձեալ քաղաքի հիւսիսային կողմում, շինութիւններից դուրս: Ս. Լուսաւորչի հանգստարանն այժմ համարւում է քաղաքի ընդհանուր հանգստարան, որովհետեւ եկեղեցիների բակերում գտնուած հին գերեզմանոցներում արդէն արգելուած է մեռեալ թաղելու»[10]:

Ս. Կարապետ եկեղեցին գտնւում է Նոր Նախիջեւանի հայկական գերեզմանոցի երկայնական առանցքում՝ արեւելեան պարսպի մօտ, եւ հարաւային շքամուտքով ուղղորդուած է դէպի հանգստարանի մուտքի դարպասները, ինչպէս տեղորոշում է ճարտարապետ Յովհաննէս Խալփախչեանը[11]: Է. Շահազիզի բնորոշմամբ՝ «Ս. Կարապետի փոքրիկ գողտրիկ շինութիւնը, միակն է քաղաքի բոլոր եկեղեցիների մէջ, որ կառուցուած է հայկական ոճով, ինչպէս որ միակն է իւր շինութեան հայկական ոճով բոլոր գիւղերի մէջ Թօփտիի Ս. Փրկիչը»[12]:

Հ. Խալփախչեանի նկարագրութեամբ՝ Պետերբուրգի Գեղարուեստի ակադեմիայի ճարտարապետ Վ. Հազիրբեկեանի նախագծով ու Նոր Նախիջեւան քաղաքի ճարտարապետ Վ. Սազոնովի ղեկավարութեամբ կառուցած Ս. Կարապետ եկեղեցին պատկանում է Հայաստանում տարածուած խաչաձեւ գմբեթաւոր շինութիւնների տեսակին՝ ներքուստ խաչի թեւերի միջեւ կառուցուած սենեակներով, որոնք ուղղանկիւն յատակագծի յաւելումներ են, սակայն Աւագ խորանը ոչ թէ կիսաշրջանաձեւ է, այլ՝ ուղղանկիւն[13]: Կառոյցի արտաքին գունային ձեւաւորման մէջ աչքի է ընկնում խոշոր տրամատային սպիտակաքարի մանրամասների ներդաշնակ համադրութիւնը կարմիր աղիւսի շարուածքին[14]: Գմբեթի թմբուկն արտաքուստ տասներկու նիստանի է, ինչը խորհրդանշում է Յիսուս Քրիստոսի առաքեալներին: Արեւմտեան ճակատի կամարակապ խոր խորշապատշգամբի առկայութիւնը, Հ. Խալփախչեանի տեսակէտով, եզակի երեւոյթ է հայկական եկեղեցական ճարտարապետութեան մէջ ոչ միայն նորնախիջեւանեան գաղթօջախում, այլեւ Հայաստանում[15]: Դա եկեղեցուն հաղորդում է իւրայատուկ ճարտարապետական տեսք, ինչպէս որ ներսի խճանկարաւոր յատակն ու հիւսիսային պատի մօտ կանգնեցուած Ղրիմից բերուած վաղմիջնադարեան խաչքարը, որի հնութեան վկայութիւնները ներքեւում խաչաքանդակի ոճն է եւ վերեւում շրջանի մէջ նեբառուած հաւասարաթեւ խաչը[16]:

Ս. Կարապետ եկեղեցին շրջապատի գերեզմանատան հետ կազմում է մէկ ամբողջական յուշահամալիր, որտեղ թաղուած են Նոր Նախիջեւանի նշանաւոր գործիչներ: Ըստ Հ. Խալփախչեանի՝ գերեզմանատունը կարգաւորուել է յատակագծով, որը ձեւաւորել է ուղիղ անկեամբ տրամախաչուող ծառուղիների ցանց, որոնցից գլխաւորը արեւմտեան դարպասներից առաջնորդում է դէպի եկեղեցու դռները, իսկ նրա հետ զուգահեռ անցնող ու ուղղահայեաց հատող երկրորդականները գերեզմանոցը բաժանում են քառակուսիների, մասերի, որոնք պատկանում են առանձին ընտանիքների... ԺԹ. դ. վերջերից դրանք սկսել են պատել մետաղեայ ցանկապատնե-

4 Տե՛ս «Դիւան հայ վիմագրութեան», պրակ VIII, Ռուսաստանի Դաշնութիւն, աշխատասիրութեամբ՝ Գ. Գրիգորեանի, Երեւան, 1999, էջ 134 (այսուհետեւ՝ «Դիւան», պր. VIII եւ էջը):

5 Տե՛ս նոյն տեղում, էջ 134-149:

6 *Մանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան*, մասն Բ., էջ 457:

7 Նոյն տեղում:

8 Տե՛ս «Դիւան», պր. VIII, էջ 150:

9 Տե՛ս նոյն տեղում, էջ 141:

10 **Ե. Շահազիզ**, *Նոր-Նախիջեւանը եւ Նոր-Նախիջեւանցիք*, Թիֆլիս, 1903, էջ 65:

11 Տե՛ս **Օ. Халпахчьян**, *Архитектура Нахичевани-на-Дону*, Ереван, 1988, էջ 88 (այսուհետեւ՝ Հ. Խալփախչեան, նշ. աշխ.):

12 **Ե. Շահազիզ**, նոյն տեղում:

13 Տե՛ս Հ. Խալփախչեան, նշ. աշխ., էջ 90:

14 Տե՛ս նոյն տեղում, էջ 92:

15 Տե՛ս նոյն տեղում:

16 Տե՛ս նոյն տեղում:

րով, որոնց գեղարուեստական ձեւերը ժամանակ առ ժամանակ փոխուել են... Թաղման վայրերում սովորաբար բարձրացուել են թմբիկներ, եզակի դէպքերում դրուել են տապանքարեր՝ սալաձեւ կամ հարթ դագաղաձեւ, որոնց վրայ երբեմն արուել են քանդակներ, փորագրուել արձանագրութիւններ՝ հայերէն եւ ռուսերէն[17]:

Երբեմն էլ դրուել են իւրօրինակ յօրինուածքով կոթողներ՝ պատրաստուած բնական քարից:

Ի տարբերութիւն Դոնի աւազանի հայկական գիւղերի գերեզմանոցների շիրմաքարերի, Նոր Նախիջեւանի Հանգստարանի մահարձանների մէջ հանդիպում ենք բարձարուեստ կոթողների, տպաւորիչ դամբարանների՝ կերտուած սեւ, սպիտակ մարմարից, գորշ, կարմրաւուն գրանիտից: Քիչ չեն տարբեր քարերի ու գոյների ներդաշնակ համադրութեամբ խոյացող յուշարձանները:

1. Մահարձան, եկեղեցուց դէպի հարաւ-արեւմուտք, գորշաւուն քարից, 4 տող.

ԳԱՅԵԱՆԷ
ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
ԹՈՒՄՈՒՆԶԵԱՆ
1845 – 1886

ԳԱՅԵԱՆԷ / ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ / ԹՈՒՄՈՒՆԶԵԱՆ / 1845-1886:

2. Նոյն մահարձանի արեւմտեան երեսին՝ 3 տող.

ԱՐՈՒԹԻՒՆ / ԹՈՒՄՈՒՆԶԵԱՆ / 1831-1908:

3. Մահարձան, գրանիտէ, նախորդի կողքին, արեւմտեան երեսին՝ ռուսերէն, 6 տող.

17 Տե՛ս նոյն տեղում, էջ 92-93:

© National Library of Armenia



АННА КАРПОВНА / ХАЗИЗОВА, / СКОНЧ. 17 ІЮНЯ 1877 Г. / 24 -ХЪ ЛЕѢТЪ. / МИРЪ ПРАХУ ТВОЕМУ / ДОРОГАЯ ЛЮБЯЩАЯ СЕСТРИЦА(

4. Նոյն մահարձանի հիւսիսային երեսին, վերնամասում, 3 տող.

ИВАНЪ ХРИСТОФОРИЧЪ / ХАЗИЗОВЪ / 54-ХЪ Л/ТЪ.

5. Նախորդ յիշատակագրութեան անմիջապէս ներքեւում, 3 տող.

АВАТИНОВ / ГРИГОРИЙ АРТЕМЬЕВИЧ /1873-1939.

6. Նոյն մահարձանի հարաւային երեսին՝ 3 տող.

ИХЪ ДОЧЬ
МАНЯ
4 ХЪ ЛѢТЪ

ИХЪ ДОЧЬ / МАНЯ / 4-ХЪ Л/ТЪ.

7. Նոյն մահարձանի արեւելեան երեսին, վերնամասում, 3 տող.



АВАТИНОВА / СОФЬЯ ХРИСТОФОРОВНА / 73 ЛЕТ.

8. Ներքնամասում՝ 5 տող.



ДОКТОР / АВАТИНЯН А. Г. / 1898-1966 / ДОРОГОМУ НЕОЦЕНИМОМУ ЛЮБИМОМУ / ОТ ЖЕНЫ, ДЕТЕЙ И ВНУКОВ.

Ճիշտ է, այս վերջինս նոր է, սակայն տեղադրում ենք յուշարձանի արձանագրութիւնների ամբողջացման նպատակով:

Այսպիսով, տեսնում ենք, որ միեւնոյն կոթողի չորս կողմերին կան երկու տոհմերի ննջեցեալների մակագրութիւններ: Դրանցից մակաբերում ենք հետեւեալը. Իւան Քրիստափորովիչ Խազիզովը եւ Աննա Կարպովնա Խազիզովան ամուսիններ են, 4-ամեայ Մանեան նրանց դուստրն է: Երկրորդ տոհմն սկսւում է Սոֆիայով: Նա Իւան Խազիզովի քոյրն է, ինչը յուշում է նրանց ընդհանուր հայրանունը՝ Քրիստափոր: Սոֆիան կնութեան է գնացել Գրիգոր Աւատինովին: Նրանց որդին է դոկտոր Ա. Աւատինեանը, ինչն ակնբախ է վերջինիս հայրանուան Գ տառից՝ Գրիգոր:

9. Մահարձան, գրանիտից, թեքուած, արեւմտեան երեսին, ռուսերէն, 5 տող.



ЗДѢСЬ ПОКОИТСЯ ПРАХЪ / ИВАНА НИКИТИЧА / ХАЗИЗОВА / СКОНЧАВШАГОСЯ 6 МАРТА / 1903 Г. НА 35 ГОДУ.

10. Նոյնի պատուանդանի ներքեւում, 2 տող.

С. А. ТОННИТО, / РОСТОВЪ Н[А] Д[ОНУ].

Ս. Ա. Տոնիտոն հաւանաբար մահարձանը կերտող վարպետն է:

11. Նոյն մահարձանի արեւելեան երեսին, 2 տող.

ՅՈՎՀԱՆՆԷՍ / ՄԿՐՏՉԵԱՆ / ԽԱՋԻԶԵԱՆ:

12. Ցուշաքար, փոքր, գրանիտից, թեքուած մահարձանի կողքին, 5 տող.



ЗДѢСЬ ПОКОИТСЯ ПРАХЪ / ЕЛИЗАВЕТЫ ЯКОВЛЕВНЫ / ХАЗИЗОВОЙ / СКОНЧАВШЕЙСЯ 16 НОЯБРЯ / 1896 Г., НА 56 ГОДУ.

Ելիզաւետան, հնարաւոր է, Իւան Նիկիտիչ Խազիզովի (Յովհաննէս Մկրտչեան Խազիզեանի) մայրը լինի. նրանց միջեւ կայ 28 տարուայ տարբերութիւն:

Խազիզեանները Նոր Նախիջեւանի նշանաւոր տոհմերից էին: Այդ գերդաստանից երկուսը եղել են Նոր Նախիջեւանի քաղաքագլուխներ.

Պետրոս Խազեզեան՝ 1800-1802 թթ.

Կարապետ Խազեզեան՝ 1803-1805 թթ.[18]*:*

Իսկ մօտաւորապէս նոյն ժամանակներում նրանց ազգական Օվանէս Խազիզէն Նոր Նախիջեւանի Հայոց հոգեւոր դատարանի երկրորդ դատաւորն էր[19]*: Յիշեալ դատարանը կազմաւորուել էր 1781 թ.*[20]*:*

13. Տապանաքար, դագաղաձեւ, սպիտակ մարմարից, չորս միանման շիրմաքարերից հարաւայինը, երկլեզու, եղծուած, 15 տող.

18 Տե՛ս Վ. Բարխուդարեան, *Նոր Նախիջեւանի հայկական գաղութի պատմութիւն (1779-1861 թթ.)*, էջ 454:

19 Տե՛ս Ե. Ծահազիզ, *Պատմական պատկերներ*, Թիֆլիս, 1903, էջ 159:

20 Տե՛ս նոյն տեղում, էջ 141:

© National Library of Armenia

[ԱՍՏՀԱՆ]ԳՋԻ ՄԱՐՄԻՆ ՊԱՏՈՒԱՒՈՐ / ՔԱՂԱՔԱՑԻ / ՅԱԿՈՎԲ ՄԱՏԹԷՈՍԻ / ԽԸԼԸԹՋԵԱՆԻ,/ ԾՆՈՒԱԾ Է 1828 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ,/ ՎԱԽՃԱՆՈՒԱԾ Է 1868 Թ./ ՓԵՏՐՈՒԱՐԻ 13-ԻՆ:

ЗДѢСЬ ПОКОИТСЯ / ТѢЛО / ПОТОМСТВЕННАГО ПОЧЕТНАГО / ГРАЖДАНИНА / ЯКОВА МАТВѢЕВИЧА / ХЛЫТЧіЕВА,/ РОДИЛСЯ ВЪ ДЕКАБРѢ 1828 ГОДА,/ СКОНЧАЛСЯ 13 ФЕВРАЛЯ 1868 ГОДА.

Միւս երեք տապանաքարերին արձանագրութիւններ չկան. կարծես թէ ջնջուած են:

Խլթճեաններն իրենց ներդրումն են ունեցել գաղթօջախի զարգացման, կրթական գործում, բարեգործական հարցերում: Մասնաւորապէս, 1859 թ. մի խումբ Նախիջեւանցիներ, այդ թւում նաեւ՝ Հ. Խլթճեանը, «դիմում են Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմի առաջնորդ Գ. Այվազեանին եւ խնդրում Ս. Խաչ աւանում բացել հայկական դպրոց»[21]:

Վաճառական Խլտճիեւը եղել է 1868 թ. Դոնի Ռոստով եւ Նոր Նախիջեւան քաղաքների միաւորման դէմ տեղի հայութեան ընդդիմադիր շարժման առաջնորդներից մէկը[22]:

1899 թ. քաղաքային դումայի ձայնաւոր Մ. Խլտչիեւի առաջարկով Նոր Նախիջեւանում ստեղծուել է յատուկ յանձնաժողով՝ ռուս մեծ պոէտ Ա. Պուշկինի ծննդեան 100-ամեայ յոբելեանը յաւուր պատշաճի նշելու նպատակով[23]:

1903 թ. Մ. Խլտճեանը հարց է բարձրացրել պատուիրակութիւն ուղարկել Հնդկաստան կալկաթահայ մեծահարուստ Մասեհ Բաբաջանեանի կտակի հարցով, որի կէսը 1861-1862 թթ. ստացել էր նախիջեւանահայութեան պատուիրակ՝ հայ մեծ բանաստեղծ Միքայէլ Նալբանդեանը[24]:

Ուշադրութեան է արժանի փաստը, որ Յակոբ Խլթչեանը ցարական կառավարութեան կողմից պատուի է արժանացել «տոհմական պատուաւոր քաղաքացի» կոչումով, որի յիշատակագրութեան հայերէն տարբերակում բացակայում է «տոհմական» բառը: Դրանով, ինչպէս յետոյ կը տեսնենք, աւելի արտոնեալ կարգավիճակ էր տրւում, քան սոսկ «պատուաւոր քաղաքացի» տիտղոսի պարագայում:



14. Մահարձան, գրանիտից, պատուանդանի արեւելեան երեսին, 7 տող.



ՍԵՐՈՎԲԷ ԽԱՉԱՏՐԵԱՆ / ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ/ ԾՆԵԱԼ 2 ՕԳՈՍՏՈՍԻ 1846 Թ. / ՎԱԽՃԱՆԵԱԼ 11 ՄԱՐՏԻ 1911

21 Վ. Բարխուդարեան, *Նոր Նախիջեւանի հայկական գաղութի պատմութիւն (1861-1917 թթ.)*, էջ 273:

22 Տե՛ս նոյն տեղում, էջ 19-20, տողատակ:

23 Տե՛ս նոյն տեղում, էջ 181-182:

24 Տե՛ս նոյն տեղում, էջ 166:

Թ. / 65 ԱՄԱՑ ՀԱՍԱԿԻ: / ՆՈՐ] ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ / ՎԱՐՉՈՒԹԻՒՆԷՆ ԴՐՈՒԱԾ Է ԱՐՁԱՆՍ:

15. Նոյնի մահարձանի պատուանդանի՝ արդէն արեւմտեան երեսին, ռուսերէն, 8 տող.

ГЛАВНОМУ ГОРОДСКОЙ ДУМЫ / И / ГОРОДСКОМУ СЕКРЕТАРЮ / СЕРАФИМУ ХРИСТОФОРОВИЧУ / АРУТЮНОВУ / БЛАГОДАРНОЕ / НАХИЧЕВАНСКОЕ НА ДОНУ ГОРОДСКОЕ / ОБЩЕСТВЕННОЕ УПРАВЛЕНІЕ.

Երկլեզուեան արձանագրութիւնից իմանում ենք, որ Սերովբէ Յարութիւնեանը եղել է Նոր Նախիջեւանի դումայի (խորհրդարանի) քարտուղար: Դուման, որ արձանագրութեան հայերէն տարբերակում կոչւում է քաղաքային վարչութիւն, Վ. Բարխուդարեանի պարզաբանմամբ կեանքի է կոչուել 1870 թ.՝ փոխարինելով տակաւին ԺԸ. դ. վերջերին Դոնի հայկական գաղութում սկզբնաւորուած ինքնավար ղեկավար մարմնին՝ մագիստրատին: Այն բաղկացած էր 24 հոգաբարձուներից, որոնք ընտրւում էին երեք տարի ժամկէտով[25]: Իսկ նորաստեղծ դումայի անդամներն ընտրւում էին քառամեայ ժամանակով[26]:

Ուշադրութեան արժանի է փաստը, որ Նոր Նախիջեւանը ռուսերէն տարբերակում կոչւում է Դոնի Նախիջեւան, հաւանաբար հարեւանութեամբ գտնուող Դոնի Ռոստովի նմանակութեամբ: Վ. Բարխուդարեանն այս կապակցութեամբ յայտնում է ուշագրաւ տեղեկութիւններ, որոնցից իմանում ենք, որ Դոնի աւազանում հայերի հիմնած քաղաքն սկզբում կոչուել է պարզապէս Նախիջեւան, ինչպէս նշել ենք աւելի վաղ: Ահա, «1838 թ. Նովորոսիյի եւ Բեսարաբիայի զեներալ նահանգապետ Մ. Ս. Վորոնցովը զեկուցագիր է ներկայացնում պետական սենատ այն մասին, որ հայկական երկու քաղաքների անունների նոյնութեան հետեւանքով շփոթւում են գրագրութիւնները, անգամ կալանաւորներն ուղարկւում սխալ հասցէով եւ տեղիք տալիս բազում թիւրիմացութիւնների: Նոյն թուականի փետրուարի 15-ին սենատը որոշում է Տագանրոգի քաղաքապետութեան (градоначальство) վարչութեան ենթակայութեան մէջ գտնուող քաղաքը այսուհետեւ կոչել Դոնի Նախիջեւան կամ Նոր Նախիջեւան, իսկ հայկական մարզի քաղաքը ուղղակի՝ Նախիջեւան»[27]:

Սերովբէ Յարութիւնեանին լաւագոյնս ներկայացնում է Վ. Բարխուդարեանը. «Նախնական կրթութիւնը ստանալով Նոր Նախիջեւանում, ապա սովորելով Թէոդոսիայի Խալիբեան վարժարանում Ս. Յարութիւնեանը ուսումը շարունակում եւ աւարտում է Մոսկուայի համալսարանը: Երկու տարի Մոսկուայում եւ Պետերբուրգում իրաւաբանութեամբ զբաղուելուց յետոյ, 1873 թ. վերադառնում է հայրենի քաղաքը: Շուտով նա դառնում է գաղութի նշանաւոր հասարակական գործիչներից մէկը»[28]:

1880 թ. Ս. Յարութիւնեանը եղել է քաղաքային խորհրդարանի ատենադպիրը եւ Ռ. Պատկանեանի համախոհներից մէկը Նոր Նախիջեւանում արհեստաւորական դպրոց հիմնելու գործում[29]:

1887 թ. քաղաքային դումայի մի խումբ ձայնաւորներ, որոնց թւում եւ Սերովբէ Յարութիւնեանը, դիմում են Նոր Նախիջեւանի խորհրդարան՝ անկելանոց

25 Տե՛ս Վ. Բարխուդարեան, *Նոր Նախիջեւանի հայկական գաղութի պատմութիւն (1779-1861 թթ.)*, էջ 80, նոյնի, *Նոր Նախիջեւանի հայկական գաղութի պատմութիւն (1861-1917 թթ.)*, էջ 39:

26 Տե՛ս նոյն տեղում, էջ 38:

27 Վ. Բարխուդարեան, *Նոր Նախիջեւանի հայկական գաղութի պատմութիւն (1779-1861 թթ.)*, էջ 74, տողատակ:

28 Վ. Բարխուդարեան, *Նոր Նախիջեւանի հայկական գաղութի պատմութիւն (1861-1917 թթ.)*, էջ 324:

29 Տե՛ս նոյն տեղում, էջ 278:

© National Library of Armenia

հիմնադրելու խնդրանքով[30], ինչն իրականացում է 1891 թ.: Անկելանոցը, որտեղ տարբեր տարիներին խնամուել են մինչեւ 60-80 հարազատներ չունեցող, անխնամ, հաշմանդամ, ծերացած ու ուժասպառ մարդիկ, գործել է հէնց Ս. Կարապետ եկեղեցու բակում[31]:

1891 թ., ինչպէս պարզաբանում է Վ. Բարխուդարեանը, «Ս. Յարութիւնեանը գնում է Ռոստովում հրատարակուող «Դոնսկոյէ պոլէ» թերթի հրատարակութեան իրաւունքը, այն վերանուանում «Պրիազովսկի կրայ» եւ սկսում լոյս ընծայել ընդարձակ ծրագրով: Կարճ ժամանակում թերթը լայն ընդունելութիւն է գտնում եւ լաւ անուն վաստակում... Ս. Յարութիւնեանը մինչեւ իր կեանքի վերջը՝ 1911 թ. թերթի անփոփոխ խմբագիրն էր»[32]:

1890-ական թթ. Ս. Յարութիւնեանն իր նպաստն է բերել Նոր Նախիջեւանում բարձրագոյն ուսումնական հաստատութիւն՝ գիմնազիա բացելու գործում[33]: Նա մեծ ներդրում ունի նաեւ հայրենի քաղաքում Գոգոյեան իգական դպրոցի կեանքի կոչման հարցում[34]:

1901 թ. քաղաքային դուման Նոր Նախիջեւանում էլեկտրական տրամուայ կառուցելու մասին դրական վճիռ է ընդունում եւ առանձնացնում հինգ հոգուց բաղկացած յանձնաժողով, որի կազմում էր նաեւ Ս. Յարութիւնեանը[35]:

Մէջբերուած վկայութիւններից երեւում է, որ Սերովբէ Յարութիւնեանն իր կեանքը նուիրել է Նոր Նախիջեւանի բարգաւաճմանը, կրթական, բարեգործական հաստատութիւնների հիմնադրմանը:

30 Տե՛ս նոյն տեղում, էջ 163:
31 Տե՛ս նոյն տեղում, էջ 163-164:
32 Նոյն տեղում, էջ 324:
33 Տե՛ս նոյն տեղում, էջ 302:
34 Տե՛ս նոյն տեղում, էջ 303, 324:
35 Տե՛ս նոյն տեղում, էջ 57:

16. Յուշաքար՝ ամրացուած մահարձանին՝ իրար վրայ դրուած քարերի տեսքով, հիւսիսային երեսին, 4 տող.



ՄԱՆՈՒԿ ԽԱՉԵՐԵՍԵԱՆ / ԱԼԱՃԱԼԵԱՆ,/ 1798 ՄԱՐՏԻ 1,/ 1868 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22:

17. Յուշաքար՝ ամրացուած նոյն մահարձանի հարաւային երեսին, 4 տող.



ԻՍԿՈՒՀԻ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ / ԱԼԱՃԱԼԵԱՆ,/ 1814 ՅՈՒՆԻՍԻ 4,/ 1888 ՓԵՏՐՈՎԱՐԻ 12:

Մանուկ եւ Իսկուհի Ալաջալեանները, թերեւս, ամուսիններ են: Մանուկ Ալաջալեանը եղել է վաճառական, Նոր Նախիջեւանում ունեցել է ծխախոտի ֆաբրիկա[36]: Նա 1854-1856 թթ. Նոր Նախիջեւանի քաղաքագլուխն էր: Վ. Բարխուդարեանի պրպտմամբ՝ Ղրիմի պատերազմում (1853-1856) «ռազմական գործողութիւններ ծաւալելու հէնց առաջին ամիսներին՝ 1854 թ. յունուարի 20-ին Մ. Ալաջալովի նախագահութեամբ հաւաքուելով ժողովի, հայկական գիւղերը բանակին օգնելու պատրաստակամութիւն են յայտնում եւ դրամական

36 Տե՛ս Վ. Բարխուդարեան, *Նոր Նախիջեւանի հայկական գաղութի պատմութիւն (1779-1861 թթ.)*, էջ 250:

նուիրատուութիւն կատարում»[37]: Նոյն 1854 թ. քաղաքագլուխ Մանուկ Ալաջալեանը յայտարարութիւն է տարածում, որ պատրաստ է ունեցուածքից եւ օթեւանից զրկուած զինուորական հրամանատարութեան ու պաշտօնեաների ընտանիքները մինչեւ պատերազմի վերջը պահելու[38], եւ որ Նոր Նախիջեւանի բնակիչներն արդէն ապացուցել են իրենց նուիրուածութիւնը կայսրին ու հայրենիքին[39]: Ռուսական կառավարութիւնը բարձր գնահատեց հայերի նուիրուածութիւնը: Վ. Բարխուդարեանի տեղեկացմամբ՝ Դոնի զօրքերի ատաման, գեներալ-լէյտենանտ Խումարովը յայտնում է պարոն ռազմական մինիստրին Մ. Ալաջալովի եւ Նախիջեւանի բնակիչների ցուցաբերած ջերմութեան մասին, որոնք օգնել են բազմաթիւ յոյն ընտանիքների: Դրա համար Նոր Նախիջեւանի հայերն արժանացել են Ալեքսանդր II կայսրի (1855-1881) շնորհակալութեան, իսկ քաղաքը պարգեւատրուել է «Ջանասիրութեան համար» ոսկէ մեդալով եւ վլադիմիրեան ժապաւէնով[40]:

Ե. Շահազիզը յայտնում է, որ Դոնի աւազան ներգաղթած հայերը Ղրիմի եկեղեցիներից հաւաքուած ու Նախիջեւան բերուած եկեղեցական իրերը տեղի եւ գիւղերի նորակառոյց եկեղեցիներին բաժանելուց յետոյ, մնացած մասը՝ հինգ արկղերի մէջ, կնքելով, դնում են Մագիստրատի պահարանում, մինչեւ որ Մանուկ Ալաջալեանի քաղաքագլխութեան օրով դրանք տեղափոխում են Ս. Լուսաւորիչ եկեղեցի[41]:

Ալաջալեան գերդաստանին էր հարսնացել մեծ բարեգործուհի, տիկին Ակուլինիան: Նրա մարմարակերտ շիրմաքարին (հիմա չկայ) ժամանակին ընթերցուել է.

37 Նոյն տեղում, էջ 316:
38 Տե՛ս նոյն տեղում, էջ 321:
39 Տե՛ս նոյն տեղում, էջ 322:
40 Տե՛ս նոյն տեղում:
41 Տե՛ս Ե. Շահազիզ, *Պատմական պատկերներ*, էջ 183:

18. ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ ԱՁՆԻՒ ՏԻԿՆՈՋ ԱԿՈՒԼԻՆԵԱՅ ՊՈՂՈՍԵԱՆ ԱԼԱՃԱԼԵԱՆ, ՈՐ Ի ՏՈՀՄԷ ԽԱԹՐԱՆԵԱՆ, ՎԱԽՃԱՆԵԼՈՅ 3 ՍԵՊ. 1871 ԱՄԻ, Ի ՀԱՍԿԻ 62 ԱՄԱՑ[42]:

Ակուլինիա Ալաջալեանի կտակի համաձայն ու նիւթական միջոցներով են կառուցուել հանգստարանի եկեղեցին, աղքատանոցն ու հոգետունը: Այդ մասին գրուած է եղել նոյն կոթողի հակառակ կողմին.

19. ՇԻՆՈՒԱԾՔՍ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ-ԿԱՐԱՊԵՏԻ, ՀՈԳԵՏԱՆ ԵՒ ԱՂՔԱՏԱՆՈՑԻ ՆՈՐԻՆ ԿԱՆԳՆԵՑԱՒ ԸՍՏ ԿՏԱԿԻ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՏԻԿՆՈՋ ԱԿԻՒԼԵԱՅ ԱԼԱՃԱԼԵԱՆ՝ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԵՂԲՕՐՈՐԴԻՈՅ ՆՈՐԱ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԽԱԹՐԱՆԵԱՆ[43]:

Ակուլինիայի հայրը՝ Պողոս Խաթրանեանը, եղել է Նոր Նախիջեւանի քաղաքագլուխը 1818-1820 թթ.[44]:

Եկեղեցու կառուցման ժամանակի մասին ազդարարում է Ս. Կարապետի խորանի բեմի ճակատին եղած մարմարէ յուշասալի հետեւեալ վիմագիրը.

(20.) ԵԿԵՂԵՑԻՍ ՍՐԲՈՅՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ-ՄԿՐՏՉԻ ՀԻՄՆԵԱԼ Է Ի 1875 ԵՒ ՕՇԵԱԼ Ի 11 ՅՈՒՆԻՍԻ 1881 ԱՄԻ ԱՂՔԱՏԱՆՈՑԱՒ ԵՒ ՀՈԳԵՏԱՄԲ ՀԱՆԴԵՐՁ ԿԱՌՈՒՑԱՒ ԿՏԱԿԱՒԱՆԴՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԾԱԽՈՒՔ ԱՁՆՈՒՀԻ ԱԿԻՒԼԻՆԵԱՅ ՊՈՂՈՍԵԱՆ ԱԼԱՃԱԼԵԱՆՑ Ի ՀԱՆԳՍՏԱՐԱՆԻՍ ՀԱՅՈՑ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԱՅ[45]:

21. Մահարձան՝ ծառի տեսքով, գալարաձեւ յուշավահանակին, 6 տող ռուսերէն.

42 «Դիւան», պր. VIII, էջ 150:
43 Նոյն տեղում:
44 Տե՛ս Վ. Բարխուդարեան, *Նոր Նախիջեւանի հայկական գաղութի պատմութիւն (1779-1861 թթ.)*, էջ 454:
45 «Դիւան», պր. VIII, էջ 150:

© National Library of Armenia

АННА КАСПАРОВНА / КЕЧЕКЪ,/ 1840 Г.- 1911 Г. / СТЕПАН СЕРГѢЕВИЧ / КЕЧЕКЪ,/ 1831 Г.- 1884 Г.

Ենթադրելի է, որ Աննան ու Ստեփանն ամուսիններ են: Սրանք, անշուշտ, սերում են Քեչեկեաններից, որոնց ներկայացուցիչները յիշատակւում են որպէս բժիշկներ: Այսպէս, 1915 թ. Փոքր Սալա գիւղից Մեծ Սալա աշխատելու է հրաւիրւում բժշկուհի օրիորդ Քեչեկեանը[46]: Նոյն թուականին վախճանւում է Նոր Նախիջեւանի թեմական դպրոցի բժիշկ Քեչեկեանը[47]: Ինչպէս երեւում է, բժիշկ Քեչեկեանը մեծ հեղինակութիւն է վայելել աշակերտութեան շրջանում, քանի որ վերջիններիս կողմից 1906 թ. ընտրուել է որպէս նրանց շահերի պաշտպան[48] եւ ընդգրկուել դպրոցի վիճակն ուսումնասիրելու նպատակով քաղաքային խորհրդարանի վճռով յատուկ ստեղծուած յանձնաժողովի կազմում[49]:

1911 թ. Նոր Նախիջեւանում հանդիսաւոր նշուել է 1886 թուականից քաղաքային բժիշկ աշխատած Ֆ. Քեչեկեանի 25-ամեայ գործունէութեան յոբելեանը[50]:

Այդ տոհմից Ա. Քեչեկեանը 1880-ական թթ. յիշատակւում է որպէս Ռոստով-Նախիջեւանեան միջավայրում նարոդովոլական գաղափարներով համակուած հայ երիտասարդութեան ներկայացուցիչ[51]:

22. Տապանաքար, գրանիտից, խաչի պատկերից ցած, 3 տող.



ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՀԱՆԱՅ / ՍԱԹՈՒՆԵԱՆ,/ 1829-1910:

Յայտնի պետական գործիչ, Հայաստանի առաջին հանրապետութեան վերջին վարչապետ, ծագումով մեծապատեցի Ս. Վրացեանը 1918 թ. ՀՀ հռչակումից յետոյ խօսում է Սաթունեան տոհմից Նիկողայոս անունով մէկի մասին, որը «դաշնակցութիւնն էր ներկայացնում Կուբանի կառավարութեան եւ կամաւորական բանակի մօտ»[52]:

23. Տապանաքար, գրանիտից, նախորդի նման, խաչի պատկերից ցած, 3 տող.

46 Տե՛ս Վ. Բարխուդարեան, *Նոր Նախիջեւանի հայկական գաղութի պատմութիւն (1861-1917 թթ.)*, էջ 59:

47 Տե՛ս նոյն տեղում, էջ 216:

48 Տե՛ս նոյն տեղում, էջ 244:

49 Տե՛ս նոյն տեղում, էջ 283:

50 Տե՛ս նոյն տեղում, էջ 173:

51 Տե՛ս նոյն տեղում, էջ 225:

52 Ս. Վրացեան, *Կեանքի ուղիներով, դէպքեր, դէմքեր, ապրումներ*, հտ. Ե., Պէյրութ, 2007, էջ 17:

ՆՈՒՆԷ ԵՐԻՑՈՒՀԻ / ՍԱԹՈՒՆԵԱՆ,/ 1832-1912:

Երիցուհի պէտք է հասկանալ՝ երէցկին, քանի որ քրիստոնէական եկեղեցում չկայ կանանց քահանայութիւն: Ըստ այդմ՝ Նունէ երիցուհին Յովհաննէս քահանայ Սաթունեանի կինն է:

24. Տապանաքար, գրանիտից, նախորդի նման, խաչի պատկերից ցած, երկլեզու, 8 տող.



ՄԱՐԻԱՄ ՀՈՎԱԿԻՄԵԱՆ / ԹՈՒՄԱՆԵԱՆ ,/ ԾՆԵԱԼ 1850 Թ. ԱՊՐԻԼԻ 20-ԻՆ,/ ՎԱՂՃԱՆԵԱԼ 1891 Թ. ՅՈՒՆՈՒԱՐԻ 11-ԻՆ: MARIЯ AKIMOVNA / ТУМАНОВА ,/ РОД. 20 АПР/ЛЯ 1850 Г., / СКОНЧ. 11 ЯНВАРЯ 1891 Г.

25. Տապանաքար, գրանիտից, նախորդի նման, դրանից ոչ հեռու, խաչի պատկերից ցած, երկլեզու, 8 տող.



ՔԵՐՈՎԲԷ ԷՄՄԱՆՈՒԷԼԵԱՆ / ԹՈՒՄԱՆԵԱՆ,/ ԾՆԵԱԼ 1884 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ,/ ՎԱՂՃԱՆԵԱԼ 1911 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ: КИРИЛЛЪ ЭМАНУИЛОВИЧЪ / ТУМАНОВЪ,/ РОД. 6 ОКТЯБРЯ 1884 Г./ СКОНЧ. 3 СЕНТЯБРЯ 1911 Г.

Չի բացառւում, որ Քերովբէն լինի Մարիամ Յովակիմի Թումանեանի որդին: Հետաքրքրական է, որ Քերովբէ անունը ռուսերէնում (Херувим) դարձել է КИРИЛЛ=ԿԻՐԵՂ, որովհետեւ այդ լեզուում ընդունուած չէր նման անձնանուն:

26. Տապանաքար, աւազաքարից, նախորդներից ոչ հեռու, ռուսերէն, 3 տող.

МАРИЯ ИВАНОВНА / ТУМАНОВА,/ РОД. 1859 Г., СКОНЧ. 2 ДЕК. 1924 Г.

Ուշադրութեան արժանի է փաստը, որ չի նշուած Մարիամի ծննդեան օրը, հետեւապէս այն յայտնի չի եղել:

27. Տապանաքար, գրանիտից, նախորդների նման, դրանցից ոչ հեռու, խաչի պատկերից ցած, 5 տող.

© National Library of Armenia

ՏԷՐ] ՍԱՀԱԿ ՔԱՀԱՆԱՅ / [ՏԷՐ] ԽԱՉԱՏՐԵԱՆ / ՁԱՐԻՓԵԱՆՑ, / Ծ[ՆՆԵԱԼ] 1 ՅՈՒՆՎԱՐԻ 1870,/ Վ[ԱԽՃԱՆԵԱԼ] 6 ՅՈՒՆԻՍԻ 1902:

Վ. Բարխուդարեանը բաւականին ուշագրաւ տեղեկութիւն է յայտնում Տէր Սահակի հօր մասին. «1912 թ. քաղաքային խորհրդարանի դահլիճում, հանդիսաւոր պայմաններում նշում է Ս. Լուսաւորչի աւագ քահանայ Խաչատուր Զարիփեանի հոգեւոր ու հասարակական գործունէութեան 50-ամեակը»[53]:

28. Տապանաքար, գրանիտից, նախորդի նման, գրանից ոչ հեռու, խաչի պատկերից ցած, 5 տող.



ԵՐԻՑՈՒՀԻ/ Տ[ԻՐՈՒՀԻ] ՎԱՌՎԱՌԷ ՏԷՐ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ/ ՁԱՐԻՓԵԱՆՑ,/ Ծ[ՆՆԵԱԼ] ՓԵՏՐՎ[ԱՐԻՆ] 1842,/ Վ[ԱԽՃԱՆԵԱԼ] 17 ՍԵՊՏ[ԵՄԲԵՐԻ] 1900:

Կարծում ենք, տիրուհի Վառվառէն մայրն է Տէր Սահակի, կինը Տէր Խաչատուրի:

29. Կոթողի պատուանդան, սիւնաձեւ, գրանիտէ, ընին՝ 14 տող.



ՄԱՅԻՍԵԱՆ ՎԱՐԹՍ ԹԱՌԱՄԵՑ
ԿԵԱՆՔԻՍ ՃՐԱԳԸ ՄԱՐՄՈՒԵՑ
ԵՐԻՎԱՍԱՐԴ ՀԱՍԱԿՍ
ՍԱՌՆ ԳԵՐԵԶՄԱՆ ԴՐԵՑ



ԱՆԷԾՔ ՔԵԶԻ ԱՆԳՈՒԹ ԲԱՂԴ,/ ՕՏԱՐ ԵՐԿԻՐ ԻՆՁ ՔՅԵՏԻՐ,/ ԺԼԱՏ ԱՆԳՈՒԹ ԱԻԱՁԱԿԻ / ՄԱՀՈՒ ԳՆԴԱԿԻՆ ՄԱՏՆԷՑԻՐ, (ըստ բնագրին) ՄԱՅԻՍԵԱՆ ՎԱՐԹՍ ԹԱՌԱՄԵՑ, / ԿԵԱՆՔԻՍ ՃՐԱԳԸ ՄԱՐՄՈՒԵՑ, / ԵՐԻՎԱՍԱՐԴ ՀԱՍԱԿՍ / ՍԱՌՆ ԳԵՐԵԶՄԱՆ ԴՐԵՑ: / ՔԱՂՑՐ ԾՆՈՂՔ, ԵՂԲԱՅՐՔ ԵՒ ՔՈՅՐ, / ՈՒ ՄՆԱՔ ԲԱՐԵԱՒ ՅԱՒԻՏԵԱՆ, ԳՆԱՑ ՁԵՐ ՍՐՏԻՑ

53 **Վ. Բարխուդարեան**, *Նոր Նախիջեւանի հայկական գաղութի պատմութիւն (1861-1917 թթ.)*, էջ 173:

ԱՆԲԱՂԴ / ՄԿՐՏԻՉ ԿԻՐԱԿՈՍԵԱՆՑ, / Ծ[ՆԵԱԼ] 5. X. 1885, Վ[ԱԽՃԱՆԵԱԼ] 18. XI. 1919, / ԱԼԵՔՍԱՆՏՐԱՊՕԼՑԻ:

Բաւականին հետաքրքրական արձանագրութիւն է: Զուտ վիմագրագիտական տեսանկիւնից ուշադրութեան արժանի է փաստը, որ երկթագիր բնագրում մի քանի տառեր (զ, ւ, ձ, ց, յ, հ, ղ, չ) գործածուել են բոլորգրերով:

34-ամեայ գիւմրեցի Մկրտիչ Կիրակոսեանը զոհուել է Ռուսաստանում քաղաքացիական կռիւների տարիներին (1918-1920), երբ երկրում խառնաշփոթ էր, որից ճարպկօրէն օգտւում էին գողերն ու աւազակները:

Միքայէլ Նալբանդեանի ժողովածուում կայ կոմս Էմմանուէլի օրագրական թերթերից մի յիշատակարան, որտեղ ասւում է. «Նախիջեւանը գտնւում է Դոն գետի աջակողմեան ափում, մի բաւական բարձր սարի վրայ, ափսոս որ քաղաքի շինուածքը չեն սկսանւում իսկոյն գետի ափից, դրա հակառակ գետեզրից կէս վերստ ճանապարհ պիտոյ է կատարել մինչեւ քաղաքի սկիզբը: Պատմում են, թէ կամեցած էին սկզբումը գետի ափից սկսանել քաղաքաշինութիւնը, եւ որպէս թէ փորձ արած էին մի քանի մարդիկ բնակութիւն հաստատելու գետի մօտ, բայց աւազակներից երկիւղը ստիպել է նորանց հեռանալ այդ տեղից»[54]:

Վ. Բարխուդարեանի հաւաստմամբ՝ «Դոն գետի անմարդաբնակ ձախափնեայ եղէգնուտներում յաճախ ապաստանում էին չարագործ անձնաւորութիւններ, ծածուկ յարձակւում խաղաղ բնակիչների տների վրայ, կողոպտում նրանց, սպանութիւններ կատարում»[55]:

Ե. Շահազիզի մանրամասնմամբ՝ Դոն գետի «ձախակողմեան ափն այն ժամանակ շատ ընդարձակ տարածութեամբ բոլորովին անմարդաբնակ է եղել. նա իւր ամայութեամբ եւ եղէգուտներով միշտ ապահով ապաստարան է եղել ամէն տեսակ արկածախնդիր մարդկանց համար: Ձմեռը սառոյցների վրայով, իսկ միւս ժամանակները նաւակներով նոքա միշտ հեշտութեամբ են կարողացել կատարել իւրեանց չարագործութիւնները գետափում ապրող խաղաղ հայերի տներում ու ծածուկ մնալ ոստիկանութեան հսկողութիւնից: Մի քանի այդպիսի դէպքերից եւ մանաւանդ մի դէպքից յետոյ, երբ մի ամբողջ ընտանիք առաւօտեան սպանուած են գտել իւրանց բնակարանում, բոլորի աչքը վախ է ընկել, փախչող փախչողի է եղել եւ գետ ափնեալ մասը բոլորովին դատարկուել է բնակիչներից»[56]: Ե. Շահազիզի ասելով՝ քաղաքի գետափնեայ մասում տեղի էին ունենում բազմաթիւ աւազակութիւններ, յափշտակութիւններ, սպանութիւններ[57]:

Չենք կարող ասել, թէ ինչ խաւի ներկայացուցիչ, ինչ զբաղմունքի տէր է եղել Մկրտիչ Կիրակոսեանը, սակայն այն հանգամանքը, որ նրա գրանիտէ մահարձանը բաւական թանկ պէտք է արժեցած լինէր, ենթադրելի է, որ նա հասարակութեան ունեւոր դասն է ներկայացրել, եւ աւազակի կողմից սպանուել է, պարզ է, կողոպուտի նպատակով:

30. Տապանաքար, գրանիտէ, խաչի պատկերից ներքեւ, 6 տող, վերջինը՝ ռուսերէն.

54 **Մ. Նալբանդեան**, *Երկերի լիակատար ժողովածու*, հտ. I, Երեւան, 1945, էջ 346:

55 **Վ. Բարխուդարեան**, *Նոր Նախիջեւանի հայկական գաղութի պատմութիւն (1779-1861 թթ.)*, էջ 90, տողատակ:

56 **Ե. Շահազիզ**, *Պատմական պատկերներ*, էջ 186:

57 Տե՛ս նոյն տեղում, էջ 185:

© National Library of Armenia

ԱՍՏ ՀԱՆԳՋԻ ՄԱՐՄԻՆ
ԹՄԲՈՒԼ ԳԻՒՂԱՅԻ
ԵՐԵՒԱՆԵԱՆ ՆԱՀԱՆԳԻ
ՂԱԶԱՐ ՔՈՉԱՐԵԱՆՑԻ
55 ԱՄԵԱՅ.ՎԱԽՃԱՆԵԱԼԷ 1911 ԹԻՒ ՄԱՐՏԻ 7-ԻՆ

ПАМЯТЬ ОТЪ ЖЕНЫ КИНОФІЯ

ԱՍՏ ՀԱՆԳՋԻ ՄԱՐՄԻՆ / ԹՄԲՈՒԼ ԳԻՒՂԱՅԻ / ԵՐԵՒԱՆԵԱՆ ՆԱՀԱՆԳԻ / ՂԱԶԱՐ ՔՈՉԱՐԵԱՆՑԻ,/ 55 ԱՄԵԱՅ, ՎԱԽՃԱՆԵԱԼ Է 1911 ԹԻՒ ՄԱՐՏԻ 7-ԻՆ: / ПАМЯТЬ ОТЪ ЖЕНЫ КИНОФІЯ.

Թմբուլ գիւղը գտնուել է Երեւանի նահանգի Նախիջեւանի գաւառում: Այն այժմ կոչւում է Թումբուլ, որը խորհրդային տարիներին ընդգրկուած է եղել Նախիջեւանի Իշ Բաբեկի շրջանում[58]: Այն ընկած է Նախիջեւան քաղաքի հարաւարեւելեան ծայրամասում Նախիջեւան գետի ստորին հոսանքից աջ, բարձրադիր ափին: Այստեղի հայերը հմուտ բրուտներ էին, որոնց նախնիները եկել էին Պարսկահայաստանից՝ հիմնականում Սալմաստի շրջանի գիւղերից՝ 1829-1832 թթ.: Բնակիչների գերակշիռ մեծամասնութիւնը հայեր էին, իսկ 1970-ական թթ. կազմուած է եղել միայն թուրքերից[59]: 2009 թ. Թումբուլը վարչականօրէն ներառուել է Նախիջեւան քաղաքի տարածքային կազմի մէջ[60]:

Հետաքրքրական է, որ այս վիմագիրը երկու հայկական Նախիջեւանների միջեւ սերտ կապերի վկայութեան տպաւորութիւն է թողնում: Մինչդեռ Դոնի Նախիջեւանի անունը ձգել է նաեւ Գողթնի Նախիջեւանցիներին:

Էլ աւելի հետաքրքրական է Ղազար Քոչարեանցի կնոջ անունը՝ Կինոֆիա, որն այլուստ մեզ յայտնի չէ, եւ բառն էլ ստուգաբանուած չէ: Կարծում ենք՝ Կինոֆիա անունը յունական ծագում ունի եւ աւելի շատ յայտնի է Գենոֆիա տարբերակով: Այն բաղկացած է «գենոս» (ծին) եւ «ֆիա» արմատներից: Վերջինս կարող է նոյնանալ «ֆեյա»-ի հետ, որը «փերի»-ն է: Այդ դէպքում Գենոֆիա պէտք է հասկանալ փէրիից ծնուած:

31. Խաչ-մահարձան, շագանակագոյն գրանիտից, բարձրարուեստ, պատուանդանին, 5 տող.



ԵՐՋԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ / ԴԱՆԻԷԼ ԱՂԱ ՅՈՒՆԱՆԵԱՆ / ՍԱԼՄԱՍՏԵՑԻ,/ ՎԱԽԵ. 1903 Թ. ՓԵՏ. 5 / 56 ԱՄԱՑ:

32. Նոյն պատուանդանի հակառակ երեսին, ռուսերէն, 3 տող.

58 Տե՛ս Թ. Ցակոբեան, Ստ. Մելիք-Բախշեան, Ց. Բարսեղեան, *Հայաստանի եւ յարակից շրջանների բառարան*, հտ. 2, Երեւան, 1988, էջ 459:

59 Տե՛ս նոյն տեղում, էջ 496:

60 Տե՛ս https: // ru. wikipedia. org / wiki / Бабекский_район.

ДАНИЛЬ ИВАНОВИЧ / УНАНОВЪ,/ СКОНЧАЛСЯ 5 ФЕВРАЛЯ 1903 Г.

Ռուսերէն տարբերակում չի նշուած ննջեցեալի ծննդավայրը՝ Պարսկաստանի Սալմաստ գաւառը, իսկ հայերէն գրուածքում՝ հայրանունը՝ Իւան=Յովհաննէս: Դատելով ազգ վկայակոչումից՝ Դանիէլ Յունանեանը թերեւս ներկայացրել է Նախիջեւանահայութեան առեւտրական դասը, ենթադրելի է՝ խոշոր, ինչի առհաւատչեան նրա շքեղ կոթողն է:

33. Կոթողի պատուանդան, շագանակագոյն գրանիտից, ընկած գետնին, 9 տող.



ԱՍՏ ՀԱՆԳՋԻ ՇԻՐԻՄՔ / ...ԽԱԴՈՒՆ ԵՒ / ԹՈՌԱՆ ՆՈՒԱՐԴ / ԽԱՉԱՏՐԵԱՆՆԵՐԻ,/ ԾՆՈՂԱԾ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ,/ԻՒ ՍԱԼՄԱՍՏ ՀԱՖՏՈՒԼԱՆ / ԳԻՒՂՈՒՄԸ 1857 Թ.,/ԿԱԽՃԱՆՈՒԵՑԱՆ 1915 Թ./ ՄԱՅԻՍԻ 19-ԻՆ:

Յիշատակագրութիւնում նշուած է միայն պապի ծննդեան թիւը: Ենթադրելի է, որ պապ ու թոռ մահացել են նոյն ժամանակ, հաւանական է՝ ինչ-որ պատահարից:

Ծննդավայրը Հաւթուան գիւղն է «Պարսկահայաստանի Սալմաստ- գաւառում, Դիլման գիւղաքաղաքից 3-4 կմ հարաւ, ընդարձակ հարթավայրում, շրջապատուած փարթամ այգիներով: Զուտ հայաբնակ էր: Սալմաստի ամենաբազմամարդ գիւղն էր,... ունէր ... առաջին համաշխարհային պատերազմի նախօրէին 400 տուն՝ 2200 բնակչով. զբաղւում էին երկրագործութեամբ, այգեգործութեամբ, անասնապահութեամբ, արհեստներով: Շատերը գնում էին պանդխտութեան: Ունէր եկեղեցիներ (Ս. Թադէոս, Ս. Գեւորգ), 2 վարժարան, գրադարան, թատերասրահ: Եղել է գրչութեան կենտրոն: Այստեղից են գրող եւ մանկավարժ Սէյրին՝ Աւետիք Գուլոյեանը (1880-1920), հնագէտ, պատմաբան, վիմագրագէտ Ս. Գ. Բարխուդարեանը (1898-1970), դերասան Մուրադ Կոստանեանը (1902-1970): Հաւթուանից տարբեր ժամանակներում հայերը գաղթել են Կովկաս: Ամենամեծը 1828-29 թթ. գաղթն էր, երբ վերաբնակուեցին Նախիջեւանի պրովինցիայի տարածքում»[61]: Խօսքն այստեղ ի հարկէ բուն Նախիջեւանի մասին է:

34. Քարակերտ յուշատախտակ՝ ամրացուած ծառ-յուշակոթողի ընին, 7 տող.

61 Տե՛ս Թ. Ցակոբեան, Ստ. Մելիք-Բախշեան, Ց. Բարսեղեան, *Հայաստանի եւ յարակից շրջանների բառարան*, հտ. 2, էջ 378:

© National Library of Armenia



ՌՈՒԲԷՆ / ԱԼԷՔՍԱՆԵԱՆ / ՅՈՎՀԱՆԷՍԵԱՆՑ /, ԾՆԵԱԼ 1888 Թ./ ՕԳՈՍՏՈՍԻ 15-ԻՆ,/ ՎԱՂՃԱՆԵԱԼ 1920 Թ./ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ:

Ռուբէն Ալեքսանի Յովհաննիսեանը եղել է բրդի յայտնի վաճառական: Վ. Բարխուդարեանի հաւաստմամբ՝ «Նոր Նախիջեւանում, երկրամասի գաւառների եւ միւս օկրուգների համեմատութեամբ, աւելի մեծ զարգացում էր ստացել մանր եղջերաւոր անասնապահութեան առաւել օգտաբեր ճիւղի՝ նրբամազ ոչխարաբուծութեան եւ բրդի մաքրման ու տեսակաւորման արտադրութիւնը»[62]: Ռ. Յովհաննիսեանը եւ բրդի առեւտրով զբաղուող խոշոր առեւտրականներն իրենց ապրանքներն արտահանում էին Անգլիա, Հոլանդիա, Բելգիա եւ այլ եւրոպական երկրներ[63]:

35. Կոթողի պատուանդան, շագանակագոյն գրանիտից, արեւմտեան երեսին՝ երկլեզու, 6 տող.



ՄԻՆԱ ՄԱԿԱՐԵԱՆ / ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ,/ ԾՆԱՒ 1861 ԱՄՒ,/ ՎԱԽՃԱՆԵՑԱՒ 1911 ԱՄՒ:

МИРЪ ПРАХУ ТВОЕМУ / ДОРОГАЯ НЕЗАБВЕННАЯ МАТЬ.

36. Նոյն պատուանդանի հակառակ կողմին, ռուսերէն, 2 տող.

МИНА МАКАРОВНА
ОГАНЕСОВА

МИНА МАКАРОВНА / ОГАНЕСОВА.

37. Կոթողի պատուանդան, մուգ շագանակագոյն գրանիտից, 5 տող.



ԲԱԲԿԷՆ / ՄԻՔԱՅԷԼԵԱՆ / ՅՈՎՀԱՆՆԻՍ/ԵԱՆ, ԾՆ. 1900,/ ՎԱԽՃ./ 1911 Թ.:

62 Վ. Բարխուդարեան, *Նոր Նախիջեւանի հայկական գաղութի պատմութիւն (1861-1917 թթ.)*, էջ 289:

63 Տե՛ս նոյն տեղում:

38. Քարակերտ յուշատախտակ՝ թեքութեամբ ամրացուած ծառ-յուշակոթողի բնին, երկլեզու, 6 տող.

ՍԻՄԷՈՆ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ / ԹԻԹՐԵԱՆ / ԾՆԱՒ 12 ՓԵՏՐ[ՈՒԱՐԻ],/ ՎԱԽՃԱՆԱՒ 18 ՕԳՈՍ[ՏՈՍԻ] 189[9]:/ СЕМЕНЪ АНДРЕЕВЪ / ТИТРОВЪ / 12 ՓԵՎՐ[ԱԼՅԱ] 1862-18 ԱՎԳ[ՈՒՍՏԱ] 1899.

Սիմէոն Թիթրեանի մահուան թուականի վերջին միաւոր թիւը հայերէն տարբերակում կոտրուած է եւ վերականգնւում է շնորհիւ ռուսերէն գրուածքի:

Սիմէոնի տոհմակից Կարապետ Թիթրեանը եղել է Նոր Նախիջեւանի դրամատիկական թատրոնի սիրող դերասան, որի բեմական գործունէութեան 25-ամեակը նշուել է 1904 թ.[64]:

39. Տապանաքար, գորշ աւազաքարից, 4 տող.

ՎՈՍԿՈՐՆԵՐԻԴ
ՀԱՆԳՍՏՈՒԹՅՈՒՆ
ԱՍԱՏՈՒՐ ՄԿՐՏԻՉԻ
1875-1933

ՎՈՍԿՈՐՆԵՐԻԴ / ՀԱՆԳՍՏՈՒԹԻՒՆ / ԱՍԱՏՈՒՐ ՄԿՐՏԻՉԻ,/ 1875-1933:

Արձանագրութիւնը հին չէ, սակայն, հաշուի առնելով աւազաքարի փխրութիւնը, հետեւապէս՝ արձանագրութեան անհետացման հաւանականութիւնը, որոշեցինք այն ներառել սոյն աշխատանքում: Ուշադրութեան արժանի է փաստը, որ տապանագրութիւնում չի նշուած ննջեցեալի ազգանունը, ինչը ենթադրել է տալիս, որ նա յայտնի է եղել առաւել իր անուն-հայրանունով:

40. Տապանաքար՝ գրանիտէ, խաչապատկերից ներքեւ, կողք կողքի, 4-ական տող.



ՍԵՐՈՎԲԷ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ / ԽՈՋԱՅԵԱՆ,/ 27 ՕԳՈՍ[ՏՈՍԻ] 1843,/ 10 ՆՈՅԵՄԲ[ԵՐԻ] 1879:

ԴԺԽՈՒՀԻ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ / ԽՈՋԱՅԵԱՆ,/ 26 ՆՈՅԵՄԲ[ԵՐԻ] 1854,/ 16 ՅՈՒՆՎԱՐԻ] 1885:

Սերովբէ եւ Դշխուհի Խոջայեանները թերեւս ամուսիններ են:

Խոջայեանները եղել են խոշոր առեւտրականներ, զբաղուել են ձկնկիթի վաճառքով եւ կարեւոր դեր կատարել Նոր Նախիջեւանի գաղթօջախի կեանքում[65]:

Այդ տոհմից Գաբրիէլ Խոջայեանը, որպէս քաղաքագլուխ, ղեկավարել է Նոր Նախիջեւանը 1836-1838 թթ.[66]:

Վ. Բարխուդարեանի բացայայտմամբ՝ այդ գերդաստանի ներկայացուցիչ Ս. Խոջայեանը 1907 թ. 90 հազար ռուբլի գումար է կտակել Նոր Նախիջեւանի Սուրբ Խաչ վանքում նախատեսուելիք երկամեայ երկրագործական դպրոցի բացման համար[67]:

64 Տե՛ս նոյն տեղում, էջ 346-347:

65 Տե՛ս Վ. Բարխուդարեան, *Նոր Նախիջեւանի հայկական գաղութի պատմութիւն (1779-1861 թթ.)*, էջ 288, 374:

66 Տե՛ս նոյն տեղում, էջ 454:

67 Տե՛ս նոյն տեղում, էջ 289:

© National Library of Armenia

41. Յուշակոթող, արեւմտեան երեսին 4, պատուանդանին՝ 3 (հայերէն), արեւելահայեաց կողմին՝ 7 տող (ռուսերէն).



ԱՄ՛Տ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ / ՏՈՀՄԱԿԱՆ ՊԱՏԼՈՒԱՒՈՐ՝ ՔԱՂԱՔԱՑԻ / ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ՏԷՐ-ՅՈՎՀԱԿԻՄԵԱՆ / ՏԷՐ-ՓԱՆՈՍԵԱՆԻ:

ԾՆԵԱԼ Է՝ 1868 ԱՄԻ ՄԱՐՏԻ 5-Ի,/ † ԼՎԱԽՃԱՆԵԱԼ Է՝ 1911 ԱՄԻ ԱՊՐԻԼԻ 20-ԻՆ: / ՀԱՆԳԻՍՏ ՈՍԿԵՐԱՑՆ:

42. Արեւելահայեաց կողմին.



ЗДѢСЬ ПОКОИТСЯ ТѢЛО / БЕЗВРЕМЕННО СКОНЧАВШАГОСЯ / ПОТОМСТВ⌊ЕННОГО⌋ ПОЧ⌊ЕТНОГО⌋ ГРАЖД⌊АНИНА⌋ / ИВАНА АКИМОВИЧА / ТЕРЪ-ПАНОСОВА. / РОД⌊ИЛСЯ В.⌋ 1868 Г. 5⌊-ОГО⌋ МАРТА, † ⌊СКОНЧАЛСЯ В.⌋ 1911 Г. 20 ⌊-ОГО⌋ АПРѢЛЯ. / МИРЪ И ВѢЧНЫЙ ПОКОЙ ПРАХУ ТВОЕМУ.

Բաւականին հետաքրքրական ու բազմաբովանդակ արձանագրութիւն է: Պատուաւոր քաղաքացու կոչման համակարգը Ռուսաստանում գործել է 1785-1917 թթ.: Այն լինում էր երկու տեսակի՝ անհատական ու տոհմական: Տրւում էր ոչ ազնուականական ծագում ունեցող անձանց՝ պետութեանը մատուցած որոշակի ծառայութիւնների եւ կրթական բարձր ցենզի դէպքում: Տարբեր ժամանակներում պատուաւոր քաղաքացու կոչման արժանացել են խոշոր առեւտրականներ, գիտնականներ, նկարիչներ, կայսերական թատրոնի բարձրակարգ դերասաններ, բժիշկներ, Մոսկուայի Լազարեան համալսարանի շրջանաւարտներ, Սանկտ Պետերբուրգի տեխնիկական բուհի առաջնակարգ ճարտարագէտներ: Տոհմական պատուաւոր քաղաքացու կոչման դէպքում, ինչպէս սոյն արձանագրութիւնում Յովհաննէս Տէր-Փանոսեանն է, պետութեան կողմից սահմանուած որոշակի արտոնութիւններից օգտւում էին ոչ միայն դրան արժանացած անձը, այլեւ նրա ընտանիքի անդամները[68]:

Ուշագրաւ է, որ թէ՛ հայերէն, թէ՛ ռուսերէն տարբերակներում «վախճանեալ»՝ скончался բառի փոխարէն դրուել է խաչի նշան՝ †, որի ներքոյ հասկացւում է առ ՔՍ, այսինքն՝ Աստուծոյ արքայութիւն տեղափոխուած հանգուցեալ:

Ուշադրութեան արժանի է փաստը, որ հայերէն տարբերակում չկայ անժամանակ վախճանուած արտայայտութիւնը, ինչն առկայ է ռուսերէնում՝ безвременно скончавшагося, որը միանգամայն տեղին է 43 տարեկան հասակում կեանքից հեռացածի համար:

Տէր-Փանոսեանները եղել են քահանայական տոհմ: Պօղոս Փանոսեանը ԺԹ. դ. կէսին Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմակալ առաջնորդ Մատթէոս արքեպիսկոպոս Վեհապետեանի կողմից նշանակուել է Ն. Նախիջեւանի հոգեւոր կառավարութեան անդամ[69]: Քահանայական

68 Տե՛ս forum. vgd. ru/132/8585:

69 Տե՛ս Վ. Բարխուդարեան, *Նոր Նախիջեւանի հայկական գաղութի պատմութիւն (1779-1861 թթ.)*, էջ 384:

ձեռնադրութիւն է ունեցել նաեւ մեր հանգուցեալ Յովհաննէսի հայրը, քանի որ նա յիշատակուած է «Տէր» յարգական բառով՝ Տէր Յովակիմ: Իսկ, ահա, Յովհաննէսը չի կրում այդ յարգական մակդիրը, ինչը նշանակում է, որ նա հոգեւորական չի եղել: Արձանագրութիւնում չի վկայւում նրա զբաղմունքը, բայց առաւել հաւանական ենք համարում նրա մտաւորական եղած լինելը. գուցէ աւարտել է Արեւելեան լեզուների Լազարեան համալսարանը:

43. Տապանաքար, գրանիտէ, խաչաքանդակից ներքեւ, երկլեզու, հայերէն՝ 3, ռուսերէն 4 տող.



ԲԺԻՇԿ-ՈՒՍԱՆՈՂ / ԼՈՒՍԵՂԷՆ ԼՈՒՍԵՂԷՆԵԱՆ / ՄԱԼԱՅԵԱՆ:

СТУДЕНТЪ / Л. Л. МАЛАЕВЪ,/ 6 ОКТЯБРЯ 1875 Г./ 13 ОКТЯБРЯ 1900 Г.

Հետաքրքրական է, որ հայերէն ու ռուսերէն տարբերակները լրացնում են մէկը միւսին: Այսպէս՝ առաջինում չկան ննջեցեալի ծննդեան եւ մահուան թուականների տուեալները, երկրորդում՝ նրա ապագայ մասնագիտութիւնը, անունը, հայրանունը: Վ. Բարխուդարեանի մէջբերմամբ՝ «Բժշկութիւնը,- գրում է Մ. Նալբանդեանը,- շատ տխուր բաներ ունի պատմելու այդ քաղաքի մասին: Ինչպէս Ասիայի ազգերի մէջ, նոյնպէս եւ Նախիջեւանի մէջ, բժշկութիւնը մինչեւ այժմ չէ ստացել իւր արժանաւոր յարգը եւ կշիռը ժողովրդի աչքում: Մի հիւանդ մարդ շուտով կը յօժարի մի խաբեբայի, մի պառաւի, կամ մի տգէտ վարսավիրայի (բերբերի) ձեռքից ընդունել այնպիսի ճարեր, որ մահադեղ էին եւ ամենեւին կորոտաբեր քան թէ օրինաւոր բժշկի հիմնաւոր եւ խելացի առողջարար դեղերը»[70]: Վ. Բարխուդարեանի վստահեցմամբ՝ միայն 1862 թ. է Նախիջեւանի օկրուգում նշանակւում յատուկ բժիշկ[71]:

Համեմատութեան կարգով զուգահեռաբար նշենք, որ այդ ժամանակներում Թիֆլիսում յայտնի էր դառնում Մալայեանների (Մալաեւների) ակնաբուժական տոհմը:

44. Յուշակոթող, սեւ մարմարեայ, արեւմտեան երեսին՝ 7 տող.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԱՍՊԱՐԵԱՆ / ԿԱՐԱՊԵՏՕՂԼՈՒԵԱՆ / ԾՆԵԱԼ / Ի 24 ՅՈՒՆԻՍԻ 1864 ԱՄԻ,/ ՎԱԽՃԱՆԵԱԼ / Ի 30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1888 ԱՄԻ,/ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ[72]:

45. Նոյնը ռուսերէն արեւելահայեաց կողմին՝ 7 տող.

70 Նոյն տեղում, էջ 96: Մ. Նալբանդեան, *Երկերի լիակատար ժողովածոյ*, հտ. 1, էջ 349-350:

71 Տե՛ս Վ. Բարխուդարեան, *Նոր Նախիջեւանի հայկական գաղութի պատմութիւն (1779-1861 թթ.)*, էջ 97:

72 «Դիւան», պր. VIII, էջ 151:

© National Library of Armenia

АРУТЮНЪ КАСПАРОВИЧЪ
КАРАБЕТЪ-ОГЛУЕВЪ
ОНЪ ЖЕ
ЧЕРКЕС(
РОДИЛСЯ: 24 ІЮНЯ 1864
СКОНЧАЛСЯ: 30 НОЯБРЯ 18
ВЪ НАХИЧЕВАНѢ НА

АРУТЮНЪ КАСПАРОВИЧЪ / КАРАПЕТЪ-ОГЛУЕВЪ / ОНЪ ЖЕ / ЧЕРКЕСОВЪ ,/ РОДИЛСЯ: 24 ІЮНЯ 1864 ГОДА,/ СКОНЧАЛСЯ: 30 НОЯБРЯ 1888 ГОДА / ВЪ НАХИЧЕВАНѢ НА ДОНУ.

Ռուսերէն մակագրութեան աջ հատուածում քսուած է երկնագոյն ներկ, որով մասամբ ծածկուած են Յարութիւնի ծննդեան ու մահուան թուականները: Ռուսերէն տարբերակից նաեւ իմանում ենք, որ Յարութիւն Կարապետ-Օղլույեանը կրել է երկրորդ ազգանուն՝ Չերկէսով: Այդ ազգանուան գործածութիւնը հայերէն Չերքեզեան տարբերակով տեսնում ենք յաջորդ վիմագրում:

46. Յուշակոթող, սեւ մարմարեայ, նախորդի նման, ընկած գետնին, 8 տող.



(ԳԱՍՊԱՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ / ԿԱՐԱՊԵՏ-ՕՂԼՈՒԵԱՆ / ՉԷՐՔԵԶԵԱՆ,/ ԾՆԵԱԼ / 17 ՕԳՈՍՏՈՍԻ 1825 ԱՄԻ / ՎԱԽՃԱՆԵԱԼ / 11 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1906-Ի / ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ[73]:

Գասպար Կարապետ-Օղլույեան Չերքեզեանը հայրն է նախորդ արձանագրութիւնում յիշատակուող Յարութիւնի: Վերջինս, ինչպէս տեսնում ենք, անուանակոչուել է ի յիշատակ իր պապի:

Գ. Գրիգորեանի վստահեցմամբ՝ հակառակ երեսին՝ արեւելեանին, եղել է նոյնաբովանդակ ռուսերէն արձանագրութիւն[74]:

47. Յուշակոթող, սեւ մարմարեայ, նախորդի նման, ընկած գետնին, 7 տող.

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՍԵՎԱ / ԿԱՐԱՊԵՏ-ՕՂԼՈՒԵՎԱ / ՉԵՐՔԵԶՈՎԱ ,/.../ ՌՈՒՍԻԱՆ: 1 ՄԱՅԻՍԻ 1830 Գ.,/ ՍԿՈՆՉԱԼԱՍԵ 12 ԱՊՐԵԼԻ 1875 Գ./ ՎԷ ՆԱԽԻՉԵՎԱՆԷ ՆԱ ԴՈՆՈՒ.

Գ. Գրիգորեանը հրատարակել է հայերէն տարբերակը, որը փորագրուած է արեւմտեան երեսին.

48. ԱՆՆԱ ՊԵՏՐՈՍԵԱՆ / ԿԱՐԱՊԵՏ-ՕՂԼՈՒԵԱՆ,/ ԾՆԵԱԼ Ի 1 ՄԱՅԻՍԻ 1830 ԱՄԻ,/ ՎԱԽՃԱՆԵԱԼ / Ի 12 ԱՊՐԻԼԻ 1875 ԱՄԻ,/ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆ[75]:

Գասպար ու Աննա Կարապետ-Օղլույեան Չերքեզեանները թերեւս ամուսիններ են, Յարութիւնը՝ նրանց որդին:

49. Տապանաքար, գորշաւուն, խաչապատկերից ներքեւ՝ 4 տող.

73 Նոյն տեղում:

74 Տե՛ս նոյն տեղում, էջ 150:

75 Նոյն տեղում:

ՏԷՐ ԹՈՎՄԱՍ / ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ / ԳԱՆՁԱՊԵՏԵԱՆ,/ 1813 + 1886:

Ժթ. դ. կէսերին Թովմաս քահանայ Գանձապետեանը եղել է Նոր Նախիջեւանի հոգեւոր կառավարութեան անդամ[76]:

50. Տապանաքար, սպիտակ մարմարից, 4 տող.



ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ / ՅՈՎԱԿԻՄ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ / ԲԱԲԱՍԻՆԵԱՆՑԻ,/ ԾՆԵԱԼ 1844 ԱՄԻ, 8-Ն ՕԳՈՍՏՈՍԻ,/ ՎԱԽՃ. 1918 ԱՄԻ, 26-Ն ՄԱՐՏԻ:

Վ. Բարխուդարեանը յղում է այս տոհմի մի ներկայացուցչի՝ Բաբասինով Նլէյ Պետրովիչ, որը Ժթ. դ. կէսերին զբաղուել է ձկնկիթի՝ բաւականին եկամտաբեր միջազգային առեւտրով[78]:

ՊՈՊՈՎ
1858 15/I — 15/VII 1900

ՀԱՆԳԻՐ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՄԲ / ՄԿՐՏԻՉ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ / ՊՈՊՈՎ,/ 1858 15, I - 15, VII 1900:

Ննջեցեալի հայրը՝ Կարապետ Պոպովը, Ժթ. դ. կէսերին եղել է ծխախոտի արտադրութեամբ եւ առեւտրով զբաղուող վաճառական[77]:

51. Կոթողի պատուանդան, կարմրաւուն գրանիտից, ընկած գետնին, եղծուած, 5 տող.

76 Տե՛ս Վ. Բարխուդարեան, *Նոր Նախիջեւանի հայկական գաղութի պատմութիւն (1779-1861 թթ.)*, էջ 384:

77 Տե՛ս նոյն տեղում, էջ 273:

78 Տե՛ս նոյն տեղում, էջ 288:

© National Library of Armenia